ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2019 թվականի N 317-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի վեցերորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի պահանջները և կատարելով ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված և Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից վավերացված ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրի պահանջները՝ Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետահատակագծային առաջադրանքների 2018 թվականների գործընթացների մասով համապատասխանության աուդիտ իրականացնելու նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սահմանել ներքին աուդիտի առաջադրանքի նպատակները.
   1.1 Համայնքի սեփականության հողերը սահմանված կարգով օտարման և օգտագործման տրամադրման գործառույթներ
   1.2 Շինարարության (քանդման) թույլտվության սահմանված կարգով տրամադրման գործառույթներ
   1.3 Համայնքային սեփականություն համարվող շենքերի և շինությունների հաշվառման իրականացման և բաշխման, սեփակ անության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմման գործառույթներ
2. Ներքին աուդիտի առաջադրանքի նպատակներն իրագործելու նպատակով իրականացնել՝
   2.1 Քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտում իրականացված հսկողության համակարգերի արդյունավետության գնահատում
   2.2 Քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտը կանոնակարգող միջոցառումներ՝ վերջիններիս գործունեությունը բարելավելու նկատառումով
   2.3 Ներկայացված տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատության պարզում
3. Նախատեսված աուդիտի տարեկան ծրագրով առաջադրանքների կատարման ժամկետ սահմանել2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 22-ը:
4. Աուդիտի առաջադրանքի մասնակիցներ նշանակել ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար՝ Քնարիկ Գալստյանին և աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Սարգիս Սահակյանին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 5-ին
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2019 թվականի N 325-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի 312-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի N 312-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ

   «Մեծամոր համայնքի բնակիչ՝ Ռուբեն Անդրանիկի Բաղդասարյանի կողմից ինքնակամ կառուցած ք. Մեծամոր 1-ին թաղամաս 29-1/52 հասցեի 52.9քմ մակերեսով նկուղը /համայնքի սեփ. վկայական N29102019-04-0081/ և զբաղեցրած 102.6քմ հողամասը ուղղակի վաճառքով օտարել նրան, որը կազմում է /52.9քմx 30000դրամ x 0,17/+/102.6քմ x 1914/ = 466167 /չորս հարյուր վաթսունվեց հազար հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ:

   Վաճառքը ուժի մեջ համարել Ռուբեն Բաղդասարանի 466167 /չորս հարյուր վաթսունվեց հազար հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ գումարը համայնքի տեղական բյուջե վճարելու պահից:»
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 8 - ին
ք. Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2019 թվականի N 341 -Ա

ԱՃՈՒՐԴ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի երկրորդ մասով, 73-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 290 որոշումը ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 31-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել Մեծամոր համայանքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նաշանակության հողերից 127.1 քմ հողամասի աճուրդ վաճառք՝ 1 քմ հողամասի մեկնարկային գինը սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ
2. Կազմակերպել Մեծամոր համայանքի վարչական սահմաններում գտնվող գյուղ. նշանակության 300 քմ հողամասի աճուրդ վաճառք՝ 1հա մեկնարկային գինը սահմանել 57500 /հիսունյոթ հազար/ ՀՀ դրամ
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 21-ին
ք. Մեծամոր